Վ. Ն. ՂԱԶԱԽԵՑՅԱՆ, Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության պատմությունը (1929—1937), *Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1978, 321 էջ։*

Սովետական գյուղացիության պատմության կարևորագույն ժամանակաշրջաններից է գյուղի սոցիալիստական վերակառուցման և կոլտնտեսային գյուղացիության դասակարգի ձևավորման պատմությունը։ Չնայած սովետահայ պատմագիտությունը տվյալ հարցին նշանակալի ուշադրություն է նվիրել և լուսաբանել նրա շատ կողմերը, այնուհանդերձ, հարցն ամբողջական ու ամփոփ լուծում է ստացել միայն գրախոսվող արժեքավոր մենագրությունում, որը կազմում է նույն հեղինակի 1975 թ. հրատարակած «Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը (1920—1929 թթ.)» աշխատության օրգանական շարունակությունը։

Գրախոսվող աշխատությունն իր թեմատիկայով խիստ այժմեական է։ Ինչպես հայտնի է, 1969 թ. ՍՄԿԿ կենտկոմը պատմաբանների առաջ խնդիր դրեց հետազոտել սովետական բանվոր դասակարգի, գյուղացիության և մտավորականության պատմության պրոբլեմները։ Վ. Ղազախեցյանի մենագրությունը նպաստում է տվյալ թեմայի ավելի խորը և բազմակողմանի ուսումնասիրությանը։ Նման եզրակացությունը բխում է ոչ միայն աշխատության ծավալից, թեմայի և ուսումնասիրվող պատմական ժամանակաշրջանի կարևորությունից։ Այդ են ապացուցում նաև օգտագործված և շրջանառության մեջ դրված բազմապիսի արխիվային և հրապարակված նյութերը, ուսումնասիրության կուռ կառուցվածքը, հարցերի բազմազանությունը և դրանց հետևողական ու տրամաբանական լուսաբանումը, մի շարք հարցերի նոր մեկնաբանությունը և գնահատումը, նախկինում պատմական գրականության կողմից նվազ ուշադրության արժանացած, բայց կարևորություն ունեցող հարցերի ավելի խորը վերլուծությունը, մենագրության վերլուծական-քննական (և ոչ փաստագրական) բնույթը։

Առաջաբանում հեղինակը պատճառաբանում է թեմայի կարևորությունը, տալիս է ուսումնասիրվող պրոբլեմի պատմագրության համառոտ տեսությունը։ Խոսելով պրոբլեմի կարևորության ու այժմեականության մասին, նա իրավացիորեն նշում է նաև սոցիալիստական գյուղի կառուցման փորձի միջազգային նշանակությունը։ Պատմագիտական գրականության տեսության սեղմությունը չի նսեմացնում նրա ուշագրավ լինելը։ Վ. Ղազախեցյանը չի բավարարվում այս կամ այն աշխատության մասին դրվատանքի խոսք ասելով։ Նա նաև ցույց է տալիս իր կողմից արժեքավորվող գրականության մեջ տեղ գտած սխեմատիզմը, երևույթների ու փաստերի ոչ ճիշտ գնահատումը, փաստական, վիճակագրական և այլ կարգի սխալներն ու վրիպումները։ Նման մոտեցումը բնորոշ է ոչ միայն առաջաբանին, այլև ամբողջ աշխատությանը։

«Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության պատմությունը (1929—1937)» աշխատությունը բազմապլան գործ է։ Նրա ծավալը և բազմապիսի հարցերի լուսաբանումը հեղինակին հնարավորություն են տվել շարադրելու Սովետական Հայաստանի գյուղացիության պատմության առաջնակարգ հարցերը և դրանց հետ առնչվող ու դրանցից բխող այլ խնդիրներ։ Դրանց թվին են պատկանում մասսայական կոլեկտիվացման նախապատրաստումը, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ամբողջ ընթացքը՝ մինչև լենինյան կոոպերատիվ պլանի լրիվ հաղթանակը, կոլեկտիվացման հետ կապված դժվարություններն ու թույլ տված սխալները, ինչպես նաև դրանց վերացման համար մղված պայքարը, կոմունիստական կուսակցության և սովետական պետության քաղաքական, կազմակերպչական, կադրային, ֆինանսական, նյութական-տնտեսական և տեխնիկական օգնությունը նորաստեղծ կոլտնտեսային կարգին, դասակարգային պայքարի սրումը գյուղում մեծ շրջադարձի ժամանակ, կուլակության՝ որպես դասակարգի, վերացումը, կոլտնտեսային գյուղի արտադրական վերելքը և սոցիալիստական մրցության ծավալումը, սովետների գործունեության վերակառուցումը նոր պայմաններին համապատասխան, կուսակցական-կոմերիտական աշխատանքը, հասարակական-քաղաքական կյանքը գյուղում, կուլտուրական հեղափոխության հաղթանակը և այլն։

Բնականաբար, կենտրոնական տեղում է Վ. Ի. Լենինի մշակած և կոմունիստական կուսակցության նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ կենսագործված գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հարցը։ Վերջինիս նվիրված է աշխատության նշանակալի մասը։ Ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, ի տարբերություն Սովետական Միության մի շարք առաջավոր գյուղատնտեսական շրջանների, Հայաստանում (ինչպես նաև Անդրկովկասի մյուս հանրապետություններում) մասսայական կոլեկտիվացման նախադրյալները հասունանում էին ավելի դանդաղ։ Չնայած այն հանգամանքին, որ 1929 թ. երկրորդ կեսին զգալի թվով չքավոր և միջակ տնտեսություններ ընդգրկվեցին կոլտնտեսություններում, այնուամենայնիվ նույն թվականի վերջին արտադրական կոոպերացումը կազմում էր հանրապետության գյուղացիական տնտեսությունների միայն 4,6 %-ը (էջ 55)։ Սակայն Անդրկովկասի և Հայաստանի ղեկավար կուսակցական մարմինները, հաշվի չառնելով տեղական հնարավորությունները և պայմանները, 1929 թ. վերջերին—1930 թ. սկզբներին վերցրին գյուղի արագ և շտապփույթ կոլեկտիվացման կուրս։ Հեղինակը, հենվելով բազմաթիվ փաստերի ու տվյալների վրա, ցույց է տալիս, թե ինչպես 1930 թ. հունվար-փետրվար ամիսներին, կիրառելով հարկադրանք և բռնություն աշխատավոր գյուղացիների և հատկապես միջակի նկատմամբ, խախտելով կոլեկտիվացման կամավորության լենինյան սկզբունքը, Հայաստանում արհեստականորեն արագացվում էր գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման պատմական պրոցեսը։ Կոլեկտիվացման սխալները և կուսակցական գծի ծռումներն ու խոտորումները դժգոհություն առաջացրին աշխատավոր գյուղացիության և հատկապես միջակների մեջ, որի հետևանքով 1930 թ. սկզբին գյուղում ստեղծվեց քաղաքական լարված վիճակ։

Կուսակցության ձեռնարկած միջոցառումները և հատկապես Համկ(բ)Կ Կենտկոմի 1930 թ. մարտի 14-ի որոշումը («Կոլտնտեսային շարժման մեջ կուսգծի ծռումների դեմ պայքարի մասին») վճռական դեր կատարեցին կոլտնտեսային շարժումը սխալներից և աղավաղումներից ազատելու գործում։ «Կոլտնտեսային շինարարության պրոցեսում,— նշել է Լ. Ի. Բրեժնևը,— մենք չխուսափեցինք որոշակի սխալներից։ Բայց դրանք որոնման սխալներ էին, փորձի բացակայությունից բխող սխալներ։ Կուսակցությունն ինքը համարձակորեն բացահայտում էր սխալները, բացեիրաց դրանց մասին ասում ժողովրդին ու ուղղում դրանք»[1]։

Հայաստանում 1930 թ. վերջին և 1931 թ. սկզբին ծավալված կոլեկտիվացման վերելքը 1931 թ. ընթացքում խորացավ և մասսայական բնույթ ստացավ։ Աշխատությունում բերված բազմաթիվ փաստերը և վիճակագրական տվյալները վկայում են այդ մասին։ 1931 թ. վերջին հանրապետությունում գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացումը հասավ 39,9 %-ի, նույն թվականի հունվարի 1-ի 12,1 %-ի դիմաց։ Կոլտնտեսություններում ընդգրկվել էին 67,3 հազար բատրակ, չքավոր ու միջակ տնտեսություններ։ 1931 թ. ընթացքում Հայաստանում կոլտնտեսությունների թիվը 495-ից հասավ 897-ի (էջ 173)։ Ելնելով տվյալներից, հեղինակը եզրակացնում է՝ «Այսպիսով, հանրագումարի բերելով 1931 թ. արդյունքները, կարող ենք նշել, որ մեծ շրջադարձ կատարվեց Հայաստանի գյուղի չքավոր-միջակային բնակչության մեջ՝ դեպի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը։ 1931 թ. հանրապետությունում դարձավ մասսայական կոլեկտիվացման ժամանակաշրջան, որն առանձին շրջաններում ու վայրերում վերածվեց համատարած կոլեկտիվացման» (էջ 174—175)։ Սակայն սկսած 1932 թ. մինչև 1934 թ. կեսերը կոլեկտիվացումը Հայաստանում դանդաղ էր ընթանում։ 1934 թ. երկրորդ կեսին սկսված նոր վերելքը շարունակվեց մինչև 1935 թ. վերջերը։ Այդ ժամանակամիջոցում կոլտնտեսությունների մեջ ընդգրկված տնտեսությունների թիվը կրկնապատկվեց՝ հասնելով 141 հազարի։ Կոլեկտիվացման մակարդակը 42,7-ից բարձրացավ 76,5 %-ի։ Արդեն 1936 թ. կոլտնտեսություններն ապահովում էին հանրապետության բոլոր ցանքատարածությունների 85,6 %-ը (էջ 229)։ Համատարած կոլեկտիվացման հարցը Հայաստանում հիմնականում լուծվել էր։ Դա գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման լենինյան պլանի հաղթանակն էր։

Աշխատության մյուս կարևորագույն հարցը, որ քննել ու լուծել է հեղինակը, դա կուլակության՝ որպես դասակարգի, վերացումն է։ Այս հարցին հեղինակն անդրադառնում է գրքի համարյա բոլոր գլուխներում։ Այն սերտորեն շաղկապված է կոլեկտիվացման պատմության հետ և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման արմատական հարցերից է։ Սոցիալիզմի կառուցումը նշանակում է նախասոցիալիստական կացութաձևերի փոխարեն սոցիալիստական կացութաձևի ստեղծում, շահագործող դասակարգերի իսպառ վերացում, դասակար-

---

1 Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով, հ. 2, Երևան, 1970, էջ 663։

գային շահագործման ոչնչացում։ Հեղինակը հարուստ փաստերով ցույց է տալիս դասակարգային պայքարի սրվելը գյուղատնտեսության կոլեկտիվացման ժամանակաշրջանում, կուսակցության և սովետական իշխանության նոր քաղաքականությունը կուլակության նկատմամբ՝ կապված համատարած կոլեկտիվացման հետ, դասակարգային թշնամու կատաղի դիմադրությունը սոցիալիզմի հաղթարշավին. կոլտնտեսային շարժման և սովետական իշխանության դեմ նրա պայքարի ձևերը և վերջիններիս բազմաթիվ կոնկրետ արտահայտությունները։ Զալով կոլտնտեսային կարգի հաղթանակի և իրենց մոտալուտ կամ անմիջական կործանման անխուսափելիությունը, կուլակները ոչ մի միջոցի առաջ կանգ չէին առնում սոցիալիզմի գործը խափանելու համար։ Աշխատության մի շարք էջերում հանգամանորեն ցույց է տրված սովետական իշխանության և կոմունիստական կուսակցության ձեռնարկած միջոցառումները Հայաստանում կուլակային-ղաշնակցական ավազակային խռովություններին և ելույթներին վերջ տալու համար։ 1930 թ. առաջին ամիսներին կուլակությանը հասցվեց ջախջախիչ հարված, իսկ նրա մի զգալի մասը վերացվեց որպես շահագործող դասակարգ։ Կուլակության մնացած մասը վերացվեց հետագա տարիներին։ Կոլտնտեսային կարգի և սովետական իշխանության դեմ կուլակությունը պայքարել է տարբեր ձևերով։ Տարբեր մեթոդներով է իրականացվել նաև կուլակության վերացումը Հայաստանում։ Այդ մասին աշխատության մեջ բերված են ուշագրավ շատ նյութեր։

Քննական վերաբերմունք ցուցաբերելով հրապարակի վրա եղած պատմագիտական գրականության նկատմամբ, Վ. Ղազախեցյանը բացահայտում է նրանում տեղ գտած սխալները կուլակության՝ որպես դասակարգի, վերացման քաղաքականության կենսագործման հարցում։ Հայաստանում կուլակության վերացումը տեղի է ունեցել ոչ միայն համատարած կոլեկտիվացման հիման վրա, այլև նրա սահմանափակման և արտամղման քաղաքականության պայմաններում, որը հանրապետությունում շարունակվում էր նաև 1930-ական թվականների առաջին տարիներին։ Կուլակության վերացման նման եղանակը կիրառվել է նաև ՍՍՀՄ այլ շրջաններում, որտեղ գյուղատնտեսության կոլեկտիվացումը ձգձգվեց և հիմնականում ավարտվեց երկրորդ հնգամյակի տարիներին։ Պատմական ճշմարտություն է այն փաստը, որ Հայաստանում համատարած կոլեկտիվացումը տեղի է ունեցել 1930-ական թվականների կեսերին, իսկ կուլակության՝ որպես դասակարգի, վերացումը հիմնականում իրագործվել է 1930—1932 թթ. Սովետահայ հեղինակների մոտ կուլակության՝ որպես դասակարգի, վերացման հարցի հետ կապված սխալների արմատը թաքնված է այն բանի մեջ, որ նրանք, գրեթե առանց բացառության, կուլակության վերացումը ներկայացրել են միայն համատարած կոլեկտիվացման հիման վրա։ Վ. Ղազախեցյանի սույն հարցադրումն ըստ էության նոր միտք է։ Մենագրության արժանիքներից է նրա հարուստ աղբյուրագիտական բազան։ Հեղինակն օգտագործել է կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության, Անդրկովկասի և Հայաստանի կուսակցական և սովետական մարմինների որոշումները, ղեկավար աշխատողների զեկուցումները և ելույթները, կենտրոնական և տեղական մամուլը, կուսակցական և պետական արխիվների նյութերը, վիճակագրական տեղեկատուները, պատմագիտական ուսումնասիրությունները։

Գրախոսվող աշխատությունը զերծ չէ նաև որոշ թերություններից։ Այսպես, օրինակ, ՀԱՄԿ(բ)Կ Կենտկոմի՝ «Կոլեկտիվացման տեմպի և կոլտնտեսային շինարարությանը պետության կողմից օգնություն ցույց տալու միջոցառումների մասին» որոշման մեջ ասված է ոչ թե կոլեկտիվացման ավարտման, ինչպես նշված է աշխատության 23-րդ էջում, այլ հիմնականում ավարտման մասին։ Աշխատության մի շարք էջերում (27—33, 70, 82), Հայաստանում համատարած կոլեկտիվացման սկզբնական շրջանում տեղ գտած սուբյեկտիվ սխալներն ու խոտորումներն ամբողջովին վերագրվում են Անդրկովկասի և հանրապետության կուսակցական կազմակերպություններին, որի հետ դժվար է համաձայնվել։ Ճիշտ է, 82-րդ էջում ասվում է «և այլ պատճառներով», սակայն չի ասվում, թե կոնկրետ որոնք էին դրանք։ 106-րդ էջում այն միտքն է արտահայտվում, թե «Դասակարգային պայքարը հատկապես սուր բնույթ էր կրում ադրբեջանական գյուղերում»։ Այստեղ հեղինակը բավարարվում է միայն հարցադրումով և չի փորձում այն մեկնաբանել կամ բացատրել։

Չնայած այս մասնակի թերություններին, Վ. Ղազախեցյանի «Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության պատմությունը (1929—1937)» մենագրությունը լուրջ ներդրում է Սովետական Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության պատմության գիտական ուսումնասիրության գործում։

ՍԵՐԳԵՅ ԱԼԼԱՀՎԵՐԴՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու